

ՀՏԴ 342

ՆԵՐՇԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀԱՅԿ ՓԱՅՏՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

XXI դարում ազգ-պետությունների համար որպես դարի մարտահրավեր համարվում է համաշխարհայնացումն ու դրա հորձանուտում ազգային ինքնության բնականոն արդիականացման գործընթացը: Հողվածում հողվածում համակարգային վերլուծության է ենթարկվել համընդհանրացման պայմաններում տեղեկատվահաղորդակցական հոսքերի առկայությամբ Հարավային Կորեայում գործարկված կրթական ազգային-նազմավարական հայեցակարգը: Այս համատեքստում կարևորված է բնաշխարհիկ կրթություն ստացած նազմավարական ընտրանու կենսական նշանակությունն ազգային անվտանգության պահպանման և ինքնության բնականոն արդիականացման գործընթացում:

Բանալի բառեր. նազմավարական ընտրանի, բնաշխարհիկացում, ներծին կրթական նազմավարություն, ինքնաարդիականացում, ինքնորոշում, համաշխարհայնացում:

Թեմայի արդիականությունը

Տեղեկատվահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների և համացանցի ի հայտ գալն արմատական փոփոխության է ենթարկել ժամանակի և տարածության վերաբերյալ հանրային ընկալումներն ու չափումները: Ազգ-պետություններին մինչ այդ բնորոշ էր բավականին ներամփոփ գործառույթ: Սակայն ամենը փոխվեց, երբ արդյունաբերական հասարակությանը փոխարինելու եկավ տեղեկատվական հանրույթը, որտեղ էլ հիմնական կապիտալը համարվում է տեղեկույթը: Իսկ գիտելիքի կառավարումն իր յուրահատկությամբ և համընդհանրությամբ պայմանավորում է տեղեկատվական հասարակության բնույթը [1]:

Բոլոր ժամանակաշրջաններում հասարակությունների բնականոն արդիականացման, նաև տարաբնույթ ճգնաժամերի հաղթահարման հիմնական պատասխանատուներն ազգային պոլիարխիկ ընտրանիներն են: Վերջիններս իրենց ձեռքում կենտրոնացնելով հասարակության ֆինանսատնտեսական, քաղաքական, մշակութային և այլ բնույթի պաշարների ու դրանց հիմնական մասը, կանոնակարգում և կառուցակարգում են

տվյալ սոցիումի հասարակական-քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքի նորմերն ու արժեշահային համակարգը պատմական ժամանակի ծիրում [2]:

Քաղաքական գործընթացների ռազմավարության մշակման և իրականացման առումով էլ գերակա է քաղաքական ընտրանու դերը: Ինչպես արդարացիորեն դիտարկում է ռուս քաղաքագետ Պանարինը, քաղաքական ընտրանին կարող է ոչ միայն դրական դեր խաղալ, այլև հաճախ հանդիսանալ հասարակական ողբերգության պատճառ կամ դառնալ կատակերգության գլխավոր դերակատար [3]:

Եվ որպեսզի հասարակությունը խուսափի նման ապագայի հեռանկարներից, խիստ անհրաժեշտ է, որ ազգային ընտրանին ունենա ռազմավարական մտահայեցողություն և ապագայի իր հստակ տեսլականն ու դրան հասնելու մարտավարական քարտեզը, այլ ոչ թե ունակ լինի զբաղվելու բացառապես այսրոպեական խնդիրների լուծմամբ՝ երբեմն արդյունքում անգամ վտանգելով հանրային ապագան[4]:

Խիստ կարևոր և մեր օրերում արդեն կենսական անհրաժեշտություն է, որպեսզի ազգային ընտրանիներն ունենան նաև բնաշխարհիկ ծագում, այն է՝ հավաքագրվեն և արդիականան բացառապես սեփական պաշարների հաշվին: Իսկ պատճառը, որ այն կենսական անհրաժեշտություն է դարձել մասնավորապես մեր օրերում, ըստ հեղինակի՝ պայմանավորված է համընդհանրացման ու դրա համատեքստում տեղեկատվական տարաբնույթ հոսքերի կիրարկմամբ ազգ-պետությունների ինքնիշխանությանն սպառնացող վտանգների բազմաչափությամբ և բազմազանությամբ[5]: Խոսքը վերաբերում է մասնավորապես XXI դարում արդեն մեծ մասշտաբների հասնող հիբրիդային պատերազմների, մշակութային և քաղաքակրթական էքսպանսիայի, փափուկ (soft power) և խելացի (smart power) ուժերի կիրառմանը, որոնց շրջանակներում տեղական ընտրանիների ներկայացուցիչների վերապատրաստման և իրենց ձեռնտու արժեքանությամբ ուսանելու արդյունքում տեղերում հաճախ ազգային մտահայեցողությամբ և արժեհամարգով ձևավորված ընտրանիների փոխարեն իշխանության է գալիս պարզապես տեխնոկրատների մի բույլ, որ, չհանդիսանալով տեղական քաղաքակրթական արժեքանության կրողներ, ճախողում են տվյալ հանրային քաղաքական արդիականացման, սեփական տեսակի վերաարժևորման և ինքնագնահատման, աշխարհին նորովի ներկայանալու գործընթացը: Արդյունքում նման հասարակություններն ընկնում են քաղաքական տարաբնույթ ճգնաժամերի հորձանուտ և հընթացս ժամանակի ավելի խճճվելով դրանց շրջապատյուններում՝ մարզինալացվում են և դուրս մղվում համաշխարհային քաղաքական լրջագույն

գործընթացներից [6]: «Մարզինալ մարդ» հասկացությունը շրջանառության մեջ է դրել Ռ. Պարկը: Հեղինակը «մարզինալ մարդ» ասելով նկատի ուներ տարբեր սոցիալական տիրույթների և մշակույթի սահմանագծում հայտնված այն անհատին, որը լիարժեքորեն ներառնված չէ ոչ մեկի, ոչ էլ մյուսի մեջ: Այստեղ, սակայն, կարևոր հանգամանքն այն է, որ երկու տարբեր մշակույթների սահմանագծում գտնվող մարզինալը սեփական «Ես»-ի ինքնության համընթաց արդիականացման տեսանկյունից ամենևին էլ հակված չէ երկխոսության: Արդյունքում՝ մշակութային խառնածնություն հորձանուտում հայտնված մարզինալ անհատի վերափոխումը քաղաքացու տևում է շուրջ 20 տարի: Այս համատեքստում է, որ անհրաժեշտ է սեփական «Ես»-ի ինքնորոշման բարդ գործընթացում հնարավորինս աջակցել վերջինին՝ բարձրացնելով «պետական Ես»-ի մրցունակությունը: Այլապես ցանկացած ընտրություններից հետո կամ մեկ այլ հարմար պահի հեղափոխականացված մարզինալ զանգվածները տարաբնույթ ընդվզումների, խռովությունների և անգամ գունավոր հեղափոխությունների դրոշ կարող են բարձրացնել: Եվ ինչպես արդարացիորեն նկատում է քաղաքագետ Մ. Մարգարյանը, մարզինալության՝ որպես ընդհանուր հասարակության կամ նրա առանձին սոցիալական խմբերի սոցիալ-քաղաքական վարքաբանության հակասոցիալական դրսևորումների և հասարակական-քաղաքական գործընթացներից օտարվածության հետևանք, «կանխարգելման և հաղթահարման, ինչպես նաև հասարակությունների բնականոն զարգացման ու շարունակական բարեփոխումների ճանապարհով քաղաքական մշակույթի արդիականացման համար էական, եթե չասենք վճռորոշ, դերակատարություն ունի ներծին մերիտոկրատական ընտրանու կամքը» [7]:

Արդեն XX դարի 90-ական թվականներին ոչ արևմտյան՝ հատկապես հեռավորարևելյան հասարակությունների քաղաքական արդիականացման գործընթացի գերակայություն է դառնում ընտրանիների բնաշխարհիկացման խնդիրը: Այժմ կոփտարկենք ազգային ռազմավարական (մերիտոկրատական) ընտրանիների պատրաստմանը նպատակաուղղված ներծին կրթական համակարգի դերն ու նշանակությունը կորեական ստացված փորձի միջոցով:

Կորեայի կրթական համակարգի բնաշխարհիկացումը:

Երկրորդ աշխարհամարտից հետո՝ մասնավորապես սառը պատերազմի տարիներին, երբ աշխարհաքաղաքական համակարգին բնորոշ էր երկբևեռությունը, Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի քաղաքական, տնտեսական, ինչպես նաև քաղաքակրթական ազդեցության ոլորտում հայտնված լատինաամերիկյան, աֆրիկյան և ասիական մի շարք հանրույթներ որդեգրեցին «վազող արդիականացման» փորձը: Սա իրենից

ենթադրում է սեփական կենսաձևի և կյանքի որակի կերպավորում հանրային կառավարման արևմտյան փորձի մեխանիկորեն ընդօրինակման ճանապարհով: Դրանց արտատպումը մի կողմից ունեցավ դրական ազդեցություն հասարակական մտքի և գիտատեխնիկական առաջընթացի ապահովման հարցում, քանի որ Արևմուտքում գիտատեխնիկական առաջընթացն ու նորարական մոտեցումները, և որպես դրանց արդյունք՝ հանրային կառավարման կառուցակարգերը, ինստիտուտներն ու մեթոդաբանությունն անհամեմատելի հաջողություններ էին գրանցել: Սակայն մյուս կողմից էլ տեղական արժեշահային համակարգի, մշակութային և սոցիալ-քաղաքական վարքաբանության առանձնահատկությունների, ավանդույթների, աշխարհընկալման յուրօրինակության անտեսումն առաջ բերեց լուրջ տարածայնություններ տեղական ավանդական մտահայեցողության և արևմտյան արժեքաբանության միջև: Կորեայի կրթական համակարգը ժամանակի հոլովույթում պարբերաբար հայտնվել է տարբեր արտաքին հոսքերի ազդեցության ներքո՝ պայմանավորված քաղաքական ժամանակի առանձնահատկություններով, Հեռավոր Արևելքում հիմնական քաղաքական և քաղաքակրթական դերակատարներով: Այսպես օրինակ՝ մինչև XIX դարի վերջը կորեական կրթական համակարգը, ինչպես նաև ողջ մշակութային ոլորտը, գտնվում էր չինական քաղաքակրթության ազդեցության ներքո: Հիշեցնենք, որ քննարկվող ժամանակահատվածում չինական կրթական ձևաչափի առանցքում ընկած էր կոնֆուցիականությունը, որը, ի դեպ, իր վառ ընդգծված հետքը թողել է նաև ողջ չինական քաղաքակրթական աշխարհի արժեքաբանության վրա: Կոնֆուցիական կարծրատիպերի վրա կառուցված կրթական համակարգի մեթոդաբանության հիմքում ընկած էր ավտորիտարիզմը, որը մերժում էր նորարական մոտեցումներն ու կրթության գիտահետազոտական բնույթը: Կրթական այս ձևաչափի հիմնական խնդիրն ուսանողների կողմից չինական դասական գրականության տառացի յուրացումն էր՝ ուսուցանողի և նրա տրամադրած տեղեկույթի նկատմամբ անվերապահ հարգանքի ու վստահության պահանջով: Որպես հանրային նշանակության ինստիտուտ՝ հիշյալ կրթական ձևաչափի հիմնարկների առջև պետական իշխանության կողմից առաջադրանք էր դրվել սահմանված արժեքաբանության, սոցիալական վարքաբանության կանոնների, աշխարհընկալման սկզբունքների տիրույթում պատրաստել անհրաժեշտ կադրերի, ովքեր հընթացս ժամանակի պետք է լրացնեին գործող ընտրանիների շարքերը:

XIX դարի վերջերից սկսած արդեն, կապված ճապոնական ինտերվենցիայի հետ, Կորեան, ներառյալ նրա կրթական համակարգը, հայտնվեցին Ճապոնիայի ազդեցության ոլորտում: Ճապոնիան Հեռավոր Արևել-

քում առաջինն էր, որ ձեռնամուխ էր եղել արդիականացման գործընթացին՝ ուղենիշ սահմանելով քաղաքական արդիականացման արևմտյան ձևաչափը: Արդյունքում ստացվում է, որ Կորեայի առաջին շփումներն արևմտյան արժեքանական համակարգի հետ, այդ թվում և կրթական ոլորտում, տեղի են ունեցել ճապոնական միջնորդությամբ: Արևմտյան ստանդարտներով արդիականացած ճապոնական կրթական համակարգը կորեական կրթական համակարգ ներմուծեց նոր մոտեցումներ, մեթոդներ և ընթացակարգեր, ինչպես, օրինակ, ակադեմիական կարգը, օտար լեզուների ուսուցումը, կրթական կազմակերպությունների ինքնավարության սկզբունքը, քննադատական մոտեցումը, ուսուցիչների վերապատրաստման, նաև կրթական գործընթացների կազմակերպման նոր ընթացակարգեր: Սակայն արդեն 1945-ից հետո Արևմուտք-Կորեա հարաբերություններն ստացան անմիջական բնույթ՝ հանձինս ԱՄՆ-Կորեա բազմամակարդակ և բազմաչափ շփումների: Ըստ էության՝ Կորեան՝ մասնավորապես նրա հարավային հատվածը, ամբողջությամբ ընկավ ԱՄՆ տոտալ վերահսկողության դաշտ: Կորեական կրթական հաստատություններն ուղղակի նմանակում էին ամերիկյան կրթական հաստատությունների ուսուցման կազմակերպման, դասընթացների մեթոդաբանության, կառավարման սկզբունքներին, դասացուցակների կազմման ձևաչափերը՝ անգամ դասավանդվող առարկաների մեծ մասը նույնական էր: Ի հավելումն նշվածի՝ հսկայական նշանակություն էր հատկացվում անգլերենի դասընթացներին: Կրթական զանազան ծրագրերի շրջանակներում ԱՄՆ-ն հոգ էր տանում, որ բազմաթիվ կորեացի երիտասարդներ իրենց բարձրագույն կրթությունն ստանան կամ շարունակեն ԱՄՆ-ի բարձրակարգ ԲՈՒՀ-երում և վերադառնան հայրենիք: Արդյունքում՝ ԱՄՆ-ն Կրեայում ունենում էր արևմտյան արժեքանությամբ կրթված և այդ արժեքները կրող երիտասարդ, խոստումնալից կադրեր, որոնց էլ ամեն գնով աջակցում էր գալ իշխանության: ԱՄՆ-ի այս քաղաքական կուրսը, առանց լուրջ խոչընդոտների հանդիպելու շարունակվում է ընդհուպ մինչև 1990-ական թթ. վերջ:

Փաստորեն, ստացվում է, որ Կորեան իր պատմության ծիրում գրեթե մշտապես հայտնվել է արտաքին մեկ այս, մեկ այն ուժերի ազդեցության ոլորտում: Բնականաբար՝ սա չէր կարող իր քաղաքակրթական և հաստատութենական կնիքը չթողնել տեղական արժեքների ձևավորման և բարեշրջման վրա: Արտաքին այս տարաբնույթ հոսքերի բովում, այնուամենայնիվ, եղել են առանձին շրջանակներ, որոնք պարբերաբար պայքար են մղել կորեական ինքնուրույն քաղաքակրթական ձևաչափի, ինքնության չափույթների, սեփական արժեշահային համակարգի, սեփական տեսակի ձևավորման, հաստատման և կայացման համար: Իր ուրույն քաղաքակրթական տեսակի կայացման և ինքնատիպության ամրագրման համար պայքարն ինստիտուցիոնալ բնույթ կրեց մասնավորապես XX դարի

վերջերից: Միաբևեռ աշխարհին բազմաբևեռ աշխարհակարգով փոխարինելու առաջին իսկ նախանշանների ի հայտ գալուն զուգընթաց՝ նկատելիորեն թուլացավ ԱՄՆ-ի միանձնյա քաղաքական կշիռը և դերակատարությունը Հեռավոր Արևելքում: Դրանից օգտվելով հեռավորարևելյան գրեթե բոլոր երկրները հայտ ներկայացրին ինքնորոշվելու, սեփական ինքնուրույնության մակարդակը բարձրացնելու, իսկ որոշներն անգամ՝ օրինակ Չինաստանը, տարածաշրջանային տերություն դառնալու համար:

Կորեական կառավարող ընտրանին քաջ գիտակցեց, որ ինքնորոշվելու և համընդհանրացման ձգտող նոր աշխարհակարգում ուրույն տեղն ու դերն ապահովելու, սեփական տեսակի ինքնատիպության շարունակականությունն ապահովելուն միտված ռազմավարական կառավարում կարող է իրականացնել միայն ներծին մերիտոկրատական ընտրանին, որը պատրաստելու համար անհրաժեշտ է կայացնել ազգային կրթական համակարգը: Համաշխարհայնացման, գիտատեխնիկական նորարարության և տեղեկատվական հանրույթի գոյության պայմաններում հասկանալով, որ առանց արդիականացման, քաղաքական համակարգի բարեփոխման և հանրային կառավարման որակի բարձրացման՝ անհնար է ապահովել սեփական ուրույն տեղը գլոբալ շուկայում, կորեացիներն ընտրեցին ավանդականի և արդիականի սինթեզի ռազմավարական հայեցակարգը: Կորեական ընտրանին նախապատվությունը սկսեց տալ արդիականացման այն ձևաչափին, որն այլևս չէր ենթադրում արևմտյան արժեքաբանության մեխանիկական նմանակում, այլ պարառում էր պատմական ժառանգությունը, պատասխանում էր ներկայի պահանջներին և ուղղված էր դեպի ապագայի հրամայականներ [8]: Կորեական կրթական համակարգում ևս սկսվեց բարեփոխումների երկար գործընթաց, որը միտված էր որպես վերջնարդյունք ստեղծել դպրոց և բուհական համակարգ, որն իր մեջ կսինթեզեր ազգային ոգին և արդիական տեխնոլոգիաները: Այսպես, օրինակ, կորեական կրթական համակարգն իր գաղափարաբանության հիմքում դրեց կյանքի, սոցիալական վարքաբանության, կենցաղի, հանրային կառավարման կոնֆուցիական կարծրատիպերը, որոնք ժամանակի հոլովույթում հարմարեցվել էին կորեական կենցաղի և ապրելակերպի պահանջներին: Արդյունքում՝ կորեական կրթական հաստատություններում սկսեց գերիշխել կոլեկտիվացման, կոլեկտիվ պատասխանատվության, վերադասի նկատմամբ հարգալից վերաբերմունքի, փոխադարձ աջակցության գաղափարաբանությունը, որոնց հիմքի վրա էլ դասընթացի կազմակերպումն արդեն իրականացվում էր արդիական արևմտյան տեխնոլոգիաներով, ընթացակարգերով, կառավարման մեթոդներով: Արդյունքում՝ Կորեայում Ճապոնիայի օրինակով արդիականացման գործընթացն սկսեց ընթանալ «**Տեղական ոգի, արևմտյան տեխնոլոգիաներ**» կարգախոսի

ներքո: Գիտավերլուծական հարացույցի հիման վրա իրականացված ավանդականի և արդիականի նման համադրման արդյունքում ստեղծված կրթական ազգային համակարգն սկսեց պատրաստել բնաշխարհիկ հոգեկերտվածքով և, միևնույն ժամանակ, նորարական բարձրագույն տեխնոլոգիաներին տիրապետող ռազմավարական հմտություններով օժտված ընտրանի: Նմանօրինակ ընտրանին էլ, իրականացնելով «good governance» (լավ կառավարում) Կորեայի համար ապահովեց կայուն և ցանցային կառավարման ու անհրաժեշտ պայմաններ:

Եզրակացություն

Ամփոփելով՝ արձանագրենք, որ XXI դարն սկսվել և, ամենայն հավանականությամբ, ընթանալու է համաշխարհայնացման գործընթացների ուղեկցության, եթե ոչ անգամ գերակայության պայմաններում: Պայմանավորված տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների ու գիտատեխնիկայի աննախադեպ առաջընթացով՝ այսօր արդեն կապն աշխարհի ամենատարբեր ծայրերի միջև առավել քան դյուրին է և ձեռնհաս: Ասվածից կարող ենք փաստել, որ հասարակությունների միջև ինտերակտիվ կապն ու բազմաչափ փոխհամագործակցությունը և շփումները դարձել են համաշխարհայնացման և համընդհանրացման օբյեկտիվ բնույթի հիմնական նախադրյաներ: Արդյունքում՝ համընդհանրացման գործընթացն իր բարդ, հակասական, բազմաչափ և տարասեռ չափույթներով սկսում է սպառնալ կլանելու ամեն ազգայինն ու տեղականը: Իսնդիրն ավելի է բարդանում, երբ, պայմանավորված Արևմուտքի գիտատեխնիկական և նորարական ներուժի հստակ ընդգծված առաջնորդությամբ՝ մասնավորապես XX դարի վերջին և XXI դարի սկզբներին համաշխարհայնացումն ընթանում էր արևմտյան արժեքահային համակարգի առաջնորդության և գերակայության պայմաններում, ինչի պատճառով էլ երբեմն համաշխարհայնացումն և արևմտականացումը (վեստերնիզացիան) նույնականացվում էին: Ազգ-պետությունները, ըստ էության, լավ հասկանալով, որ անհնար է խուսափել համընդհանրացման գործընթացից, կանգնեցին ազգային նկարագրի վերացման մեծագույն մարտահրավերի առջև: Հեռավորարևելյան որոշ երկրների, այդ թվում և Կորեայի, կառավարող ընտրանիներն արդեն 2000-ական թթ. սկսեցին գիտակցել, որ խնդրի լուծումն ազգային և համաշխարհային համակարգային և կառավարելի համադրման մեջ է, երբ առանց կորցնելու ազգային դիմապատկերը միևնույն ժամանակ կարողանում ես ինտեգրվել համաշխարհային քաղաքակրթությունների ընտանիք: Իսկ նման բազմաչափ, բազմամակարդակ, բարդագույն ռազմավարական խնդիր ի վիճակի է իրականացնելու միմիայն ազգային բնաշխարհիկ մերիտոկրատական ընտրանին: Նման ընտրանիներ պատրաստելու վերջնանպատակով էլ հիշյալ երկրները ձեռնամուխ եղան ազգային կրթական համակարգ ստեղծելու ռազմավարական խնդրին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Լորյան Ա., Մարգարյան Մ., Հովհաննիսյան Գ.**, Կրթության որակի կառավարման գործընթացի գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Հանրային կառավարում, գիտական հանդես, ՀՀ ՊԿԱ, 2013/1, 10-26 էջ:

2. **Suzanne K.**, BEYOND THE RULING CLASS, Strategic elites in Modern Society, New York: Random House, 1963. 354 pp.

3. **Панарин А.С.**, Глобальное политическое прогнозирование, оգոստոսի 21, 2020; <https://www.libfox.ru/311474-2-aleksandr-panarin-globalnoe-politicheskoe-prognozirovanie.html#book>:

4. **Ашин Г.К.**, Мировое элитное образование, «Анкил», 2008, Москва, 360с.

5. **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, «Պետական ծառայություն», 2019, Երևան, 312 էջ:

6. **Steven R. M.**, Chaos Theory and Strategic Thought, оգոստոսի 24, 2020; https://apps.dtic.mil/dtic/tr/fulltext/u2/a528321.pdf?fbclid=IwAR2IPJN071WmG9LvWsr3-UHOHZqYo-QXS7LYA4UYwHrDVMdDUyY_njeTnMg:

7. **Մարգարյան Մ.**, Մարգինալությունը քաղաքական արդիականացման բաղադրիչ. «Գունավոր հեղափոխություններ», 21-րդ ԴԱՐ, թիվ 3, 2008թ, Երևան, էջ 21:

8. **Jisun J.** Higher education in Korea: Western influences, Asian values and indigenous processes, оգոստոսի 30, 2020; https://www.researchgate.net/publication/315301162_Higher_education_in_Korea_Western_influences_Asian_values_and_indigenous_processes:

РОЛЬ ЭНДОГЕННОЙ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ В ФОРМИРОВАНИИ НАЦИОНАЛЬНОЙ СТРАТЕГИЧЕСКОЙ ЭЛИТЫ

АЙК ПАЙТЯН

Академия государственного управления Республики Армения

В XXI веке для национальных государств серьезнейшими вызовами являются глобализация и в ее условиях удачное проведение модернизации национальной самоидентичности. В данной статье проводится систематический анализ национально-стратегической образовательной концепции реализуемая в Южной Корее при наличии информационно-коммуникационных потоков в условиях глобализации. В этом контексте подчеркивается особая важность стратегической элиты имеющую эндогенное образование в процессе поддержания национальной безопасности и естественной модернизации самоидентичности.

Ключевые слова: стратегическая элита, эндогенная образовательная стратегия, самомодернизация, самоопределение, глобализация.

THE ROLE OF THE ENDOGENE EDUCATIONAL SYSTEM IN THE FORMATION OF THE NATIONAL STRATEGIC ELITE

HAYK PAYTYAN

Academy of Public Administration of the Republic of Armenia

In the 21st century, globalization and the process of natural modernization of national identity are considered to be the challenges of the century for the nation-states. The article gives detailed analysis and information on the educational national-strategic concept, implemented in South Korea, in the terms of generalization and various information and communication network flows. Taking as a starting point the modern approaches of comparative political science, the role and the significance of indigenous education in the process of forming endogene strategic elite has been emphasized, thus emphasizing the necessity of implementing a national educational strategy in the Republic of Armenia. The vital importance of indigenous education in the process of national security protection and the natural modernization of identity is emphasized in this context.

Keywords: strategic elite, naturalization, endogene educational strategy, self-modernization, self-determination, globalization.

*Ներկայացվել է խմբագրություն 02.09.2021
Երաշխավորվել է տպագրության 10.09.2021*